ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **30.01.2023թ.**

Կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) հերթական նիստը:

Մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Լ. Բալյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ս. Սահակյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի ավագ գիտաշխատող
Ս. Սարգսյան	- ԱԱՏՄ ղեկավարի պարտականությունները կատարող
Ա. Առուշանյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Գ. Հովհաննիսյան	- ԱԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
Թ. Հակոբյան	- ԱԱՏՄ որակի ապահովման վարչության պետ
Է. Աստվածատրյան	- ԱԱՏՄ իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետ

Չեն մասնակցել՝

Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Օրակարգի հարցեր.

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի տարեկան հաշվետվության նախագծի քննարկում և հավանության արժանացում.

2. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունների ներկայացում և քննարկում.

3. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատման քննարկում և հաստատում.

4. Այլ հարցերի քննարկում:

Ն. Մկրտչյանն առաջարկեց հաստատել օրակարգը:

Ս. Սարգսյանն առաջարկեց օրակարգում ընդգրկել ԱԱՏՄ 2023 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում վերաբաշխում կատարելու հարցը:

Որոշվեց օրակարգը լրացնել ևս մեկ հարցով՝ «Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն»:

Օրակարգը հաստատվեց ևս մեկ լրացուցիչ հարցով:

1. Քննարկվեց օրակարգի հարցը՝

ԱԱՏՄ 2022 թվականի տարեկան հաշվետվության նախագծի քննարկում և հավանության արժանացում

Ս. Սարգսյանը ներկայացրեց ԱԱՏՄ-ի կողմից կատարված աշխատանքները: Նշեց, որ ԱԱՏՄ հիմնական գործառույթներն իրականացվել են իրազեկման աշխատանքներով և իրավական ակտերի փոփոխությունների առաջարկներով: Կարևոր փոփոխության առաջարկ է ներկայացվել կապված դեղերի շրջանառության ոլորտում ԱԱՏՄ-ին օրենսդրությամբ նախատեսվող հսկիչ գնումներ իրականացնելու լիազորությունների վերապահմամբ, որն արդեն իսկ հաստատվել է Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ: Աշխատանքային իրավունքի բնագավառում իրականացվել է համագործակցություն տարբեր կազմակերպությունների հետ, ինչպես նաև աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային հարթակի ստեղծման ուղղությամբ մի շարք աշխատանքներ են տարվել, որոնք ընթացքի մեջ են: Նաև նշեց, որ իրականացվել է ԱԱՏՄ տեսուչների գիտելիքների ստուգման գործընթաց:

Ներկայացվեց թեժ գծով ստացված զանգերի մասին՝ ըստ ոլորտների, իրականացված ստուգումների, վերստուգումների և դրանց արդյունքների, դիմում բողոքների ստացման և դրանց արդյունքում իրականացված միջոցառումների, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ թույլ տրված խախտումների մասին:

Ն. Մկրտչյանը ԱԱՏՄ-ի կողմից իրականացված թունաքիմիկատներին վերաբերող իրազեկման աշխատանքների շրջանակներում հարցրեց, թե արդյոք գյուղացիները ծանոթ են ԱԱՏՄ պաշտոնական կայքին թե ոչ, քանի որ որևէ գյուղացի հետաքրքրված չէ կայքի տեղեկություններով:

Ա. Խոջոյանը նաև հարցրեց, թե հնարավոր է արդյոք իրազեկման տեղեկատվությունը լուսաբանելու համար համագործակցել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ, որպեսզի վերջինիս միջոցով ավելի արդյունավետ դարձվի այդ տեղեկատվության տարածումը: Նաև նշեց, որ իրազեկման նյութերը կարող են փոխանցվել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ դրանք տարածելու նպատակով:

Ս. Սարգսյանը նշեց, որ այդ ուղությամբ պարտադիր աշխատանքներ տարվելու են և իրազեկման նյութերը կտրամադրվեն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:

Ա. Խոջոյանը հարցրեց, թե թեժ գծով ստացված զանգերին ինչ ընթացք է տրվում:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ, եթե զանգով պայմանավորված առկա է հիմք վարչական վարույթ իրականացնելու համար, ապա գրվում է զեկուցագիր, որի հիման վրա հարուցվում է վարչական վարույթ, իսկ խորհրդատվական բնույթ կրող հարցերի դեպքում զանգը փոխանցվում է համապատասխան ստորաբաժանում՝ հարցին պատասխանելու համար:

Է. Աստվածատրյանը նշեց, որ յուրաքանչյուր զանգ արձանագրվում է ժամով, հեռախոսահամարով և յուրաքանչյուր ամիս հաշվետվություն է ներկայացվում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ:

Ա. Դանիելյանը խնդրեց պարզաբանել, թե ԱԱՏՄ-ի կողմից ինչպես է բացահայտվում դեղատոմսով բաց թողնվող դեղերի առաքումը՝ առանց դեղատոմսի:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ օրենքով նախատեսված է, որ դեղատոմսով վաճառվող դեղերի առաքումը արգելված է և ԱԱՏՄ-ի կողմից մի շարք կազմակերպությունների ինտերնետային կայքերի ուսումնասիրության ժամանակ բացահայտվել է, որ վերջիններս իրականացնում են այդ դեղերի առաքում: ԱԱՏՄ-ն դիմում է ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հսկիչ գնումներ իրականացնելու համար, որի արդյունքում այդ դեղերի առաքման փաստը հաստատվում է: Նաև նշեց, որ մի շարք իրազեկման աշխատանքներ են իրականացվել հիվանդանոցներում՝ կապված դեղատոմսերի դուրս գրման հետ:

Լ. Նանուշյանն առաջարկեց նաև առաջին հերթին իրազեկման աշխատանքներ իրականացնել արտահիվանդանոցային բժշկական օգնություն և

սպասարկում իրականացնող կազմակերպություններում խախտումները բացառելու նպատակով: Նաև հարցրեց, թե արդյոք ԱԱՏՄ-ի կողմից նախատեսվում է որևէ միջոցառում իրականացնել հակաբիոտիկների հետ կապված:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ շատ դեպքեր են արձանագրվել առանց դեղատոմսի դեղերի իրացման հետ կապված, սակայն դատարանների կողմից արձանագրվում են կազմակերպությունների կողմից դեղատոմսերը պահպանելու հետ կապված խնդիրներ, ինչն իրենից ենթադրում է, որ, եթե դեղատունը չի պահպանել դեղատոմսերը, ապա դա դեռ չի նշանակում, որ դեղերը իրացվել են առանց դեղատոմսի: Միաժամանակ նշեց, որ այդ խնդիրը կարգավորելու ուղությամբ այժմ շրջանառվում է օրենդրական փոփոխությունների փաթեթ:

Լ. Նանուշյանը հարցրեց, թե արդյոք տրված կարգադրագրերին ԱԱՏՄ-ն հետամուտ է լինում, թե ոչ և ինչպես:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ 354 վերստուգում է իրականացվել, որոնք ուղղված են կարգադրագրերի կատարված լինելը պարզելուն, իսկ վերստուգումներից հետո նույնպես ստուգվում է կարգադրագրերի կատարված լինելը:

Լ. Նանուշյանը հարցրեց բուժզննությունների վերաբերյալ, խնդրեց ներկայացնել առկա իրավիճակը և ո՞ր կազմակերպություններում են հիմնականում հայտնաբերվել խախտումներ՝ հաշվի առնելով, որ առանց բուժզննության աշխատողները կարող են հանդիսանալ վարակիչ հիվանդությունների տարածման պատճառ:

Ս. Սարգսյանը նշեց, որ բուժզննության հետ կապված պահանջները ստուգվում են աշխատանքի անվտանգության բնագավառում՝ աշխատողների անվտանգության մասով, իսկ սննդի կազմակերպություններում ստուգումներ չեն իրականացվել:

Թ. Հակոբյանը նշեց, որ հիմնականում ստուգումներն իրականացվում են արդյունաբերական կազմակերպություններում:

Ա. Խոջոյանը հարցրեց, թե արդյո՞ք հնարավոր չէ ԱԱՏՄ-ի տվյալների բազան կապել Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տվյալների բազային, որպեսզի բուժզննությունների տեղեկատվության և խախտումների փոխանակման հնարավորություն լինի:

Ա. Դանիելյանը նշեց, որ այդ գաղափարն ընդգրկվում է ընթացիկ վերահսկողության արդյունքում իրականացվող բոլոր տեսչական մարմինների թվայնացման համակարգի մեջ, որը հետագայում կկարգավորվի:

Ռ. Սարգսյանը նշեց, որ այդ տեղեկատվությունը կարելի է ստանալ նաև «ԱրՄեդ» համակարգից:

Ա. Առուշանյանը խնդրեց պարզաբանել, թե ինչու են ստուգման ակտերը տարիների ընթացքում ավելացել, որը ենթադրում է, որ առկա է բացասական միտում: Այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք դիտարկվում են որպես ստուգման ենթակա սուբյեկտներ շարունակում են դրսևորել նույն վարքագիծը, այն պարագայում, երբ ԱԱՏՄ-ի ստուգումների ծրագրում որոշ տնտեսավարողներ կրկնվում էին: Նաև

խնդրեց պարզաբանել դիմում բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթների վերաբերյալ. մասնավորապես բժշկական օգնության և սպասարկման ոլորտում ստացված 78 դիմում բողոքից միայն 6-ն է դարձել վարչական վարույթի հարուցման առարկա այն դեպքերում, երբ մյուս ոլորտներում վարչական վարույթի հարուցման առարկա են դարձել ստացված բողոքների մեծ մասը:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ բժշկական օգնության և սպասարկման ոլորտում առկա է նոր բժիշկների ընդունման հանգամանք, ինչը նպաստում է նույն խախտումների կրկնմանը, աշխատանքի իրավունքի բնագավառում աշխատավարձերի վճարման խախտումները պայմանավորված են տարբեր պատճառաբանություններով, որոնք նույնական չեն նախորդ ստուգմամբ հայտնաբերված խախտումների վերաբերյալ ներկայացված պատճառներին, որոշ կազմակերպություններում խախտումներ չեն արձանագրվել և կազմվել են տեղեկանքներ:

Ա. Առուշանյանը նշեց, որ վիճակագրությունն ունի բացասական միտում և տեսչական մարմինները պետք է իրենց ռեսուրսը նպատակաուղղեն ավելի շատ դեպի կանխարգելման գործառույթը, որպեսզի խախտումների արդյունքում տուգանքներ կիրառելուց հետո նորից նույն խախտումները չկատարվեն:

Ս. Սարգսյանը դիմում բողոքների վերաբերյալ նշեց, որ դրանք ոչ միայն այն դիմումներն են, որոնց հիման վրա պարտադիր պետք է վարույթներ հարուցվեն այլ նաև այն հարցադրումներն են, որոնց հիմքով տրվում են միայն պարզաբանումներ և խորհրդատվություններ:

2. Քննարկվեցին օրակարգի հարցերը՝

- ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունների ներկայացում և քննարկում.

- ԱԱՏՄ 2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատման քննարկում և հաստատում

Թ. Հակոբյանը ներկայացրեց ԱԱՏՄ-ի կողմից իրականացված աշխատանքների մասին. մասնավորապես իրականացված ստուգայցերի, ստուգումների, վարչական վարույթների վերաբերյալ, ինչպես նաև դրանց արդյունքում արձանագրված խնդիրների մասին: Նշեց ստուգումների գործընթացի ոչ ճիշտ պլանավորման, ինչպես նաև ԱԱՏՄ-ի կողմից ծանրաբեռնված աշխատանքի մասին, ստուգումների տարեկան ծրագրի կազմման աշխատանքներում ռիսկայնության հաշվարկի, տնտեսավարող սուբյեկտներին ըստ ռիսկայնության ներառման, և գործընթացի մի շարք կրկնվող խնդիրների վերաբերյալ, այդ թվում՝ ծրագրում Տեսչական մարմնի վերահսկողությունից դուրս գտնվող տնտեսավարող սուբյեկտների ընդգրկման և ակնհայտ ռիսկային տնտեսավարող սուբյեկտների ծրագրից դուրս մնալու հետ կապված հարցերը: Նշեց նաև ստուգումների ծրագրով նախատեսված ստուգումների պլանավորման խնդրի մասին, մասնավորապես

եռամսյակային պլանավորումը չպահպանելու, անհիմն գործուղումների, լրացուցիչ ծախսերի, վարչական իրավախախտումների գործի քննությունը իրականացնելու վայրի ոչ ճիշտ ընտրության, ժամկետների սխալ հաշվարկի, վերստուգումներ իրականցնելու ուշացման, ինչպես նաև վերլուծությունների բացակայության մասին: Միաժամանակ ներկայացրեց Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների և դրանց արդյունքների վիճակագրությունը և բողոքների պատճառները, ինչպես նաև ծառայողական քննությունների անցկացման գործընթացի, կարգապահական տույժերի կիրառման համաչափության հետ կապված խնդիրները, տույժերի բողոքարկումներն ու արդյունքները: Բոլոր խնդիրների մասին գրավոր առաջարկով ներկայացվել է ԱԱՏՄ ղեկավարին:

3. Քննարկվեց օրակարգի հարցը՝

- Հավանություն տալ ԱԱՏՄ 2023 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն

Ս. Սարգսյանը ներկայացրեց փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը, նշեց, որ ԱԱՏՄ-ի կողմից 2022 թվականին ձեռք է բերվել 20 թղթապահարան որոնց համար վճարումը դեռ չի կատարվել, դրանով պայմանավորված առաջարկեց ԱԱՏՄ 2023 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում կատարել վերաբաշխում նշված վճարումները կատարելու նպատակով:

Լ. Նանուշյանն այլ հարցերի շրջանակներում նշեց, որ Խորհրդի յուրաքանչյուր նիստի արդյունքում քննարկված հարցերի և դրանց արդյունքում տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ պետք է ներկայացվի հաջորդ նիստին: Միաժամանակ նշեց, որ ԱԱՏՄ-ն, որպես պետական կառավարման համակարգում գործող մարմին պետք է համահունչ ընթանա պետության որդեգրած քաղաքականությանը, մասնավորապես ծխախոտի կանխարգելման ոլորտում գործընթացները ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

Ս. Սարգսյանը նշեց, որ ԱԱՏՄ-ի կողմից 2023 թվականին արդեն իսկ հարուցվել է մոտ 37 վարչական վարույթ:

Ն. Մկրտչյանն առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամները օրակարգի բոլոր հարցերին միաձայն (7 կողմ) քվեարկեցին կողմ:

Որոշվեց.

1. Հավանություն տալ ԱԱՏՄ 2022 թվականի տարեկան հաշվետվության նախագծին.

2. Ընդունել ի գիտություն՝ ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունները.

3. Հաստատել ԱԱՏՄ 2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները.

4. Հավանություն տալ ԱԱՏՄ 2023 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն.

5. ԱԱՏՄ ղեկավարի պարտականությունները կատարող Ս. Սարգսյանին.

1) միջոցներ ձեռնարկել ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններում նշված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ.

2) ապահովել ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2022 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններով ներկայացված առաջարկությունների կատարումը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ